

ԲԱԺԱՆՈՐԴՈՒԹՅՈՒՆ

Պուշկարիոյ համար	12 ֆր.
սարեկան	7
վեցամսեայ	7
Արսասահմանի համար	15 ֆր.
սարեկան	8
վեցամսեայ	8
Աւերիկայի համար	3 ռ.
սարեկան	3 ռ.
վեցամսեայ	1.50

Ծանուցման տողը առաջին երեսին համար 40 սանթիմ իսկ վերջին երեսին համար 20 սանթիմ է. երեքին աւելի անգամներու համար 20 0/0 գեղը կը լայն:

Վառնայի համար ձեռք 40 սանթիմ է

ՇԱՐՋՈՒՄ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳՈՅԻՆ. ԲԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏՄՈՒԿՈՒՄ ԶՈՐԵՔԵՆՈՒՆ ԵՒ ՇԱՐՋՈՒՄ ՕՐԵՐԸ

Отговорникъ: СТЕПАНЪ КАНАРЯТЪ

Նամակ եւ դրամ որ կը խմբագրուին հասցիին

Редакция на вѣстникъ "Шаржумъ" Варна

Redaction du journal "Charjoum" Varna (Bulgarie)

Պուշկարիոյ համար ձեռք

15 ՍԱՆԹԻՄ

Արսասահմանի համար ձեռք

20 ՍԱՆԹԻՄ

Գրութիւնք եւ չեմ տրուիր

ՇԱՐՋՈՒՄԻ ԲԱԺԱՆՈՐԴ ԳՐՈՒՈՂԸ ԲԱԺՆԵՂԻՆԸ ՊԵՏԻ Է ԿԱՆԽԻԿ ՎՃԱՐԷ

ՄԻ ԳԱՂԹԻ. ԹՇՆԱՄԻՆ ՅԱՂԹԱՆԱԿՈՒՄ Է

Բազու, 18ին սեպտ.

Փետրուարի կոտորածը դադարելուն պէս, երբ փողոցներում հօշոտութիւն էին բազուում, հայերի հազարն բազուութիւն գլուխը կորցրած շտապում էր իր բազուը վերջնականապէս խզել Բազուի հետ և նոր բազու որոնել իր վաղուց մոռացած հայրենիքում և կամ մի ուրիշ տեղ, ուր ինքը աւելի ապահով էր համարում:

Օգոստոսի գէպքերը թերին լրացրին:

Օր չի անցնում որ երկաթուղու կայարանը լիքը չը լինի Բազուի փախչողներով, ոմանք առ ժամանակ և ոմանք ընդմիջտ: «Զոլած ենք Բազուից ասում են շատերը, այլևս մենք Բազուում տեղ չունենք»:

Գնում են Բազուից, Աւելի ճիշտն ասած՝ գաղթում են: Բայց ո՞ր են գաղթում, Գրիթ՝ Գանձակ, Շուշի, Երեւան կամ Կիւղբերը: Միթէ մեր սիրուն, բայց և դժբաղդ հայրենիքի այդ ա՛մէն վայրերը չե՞ն գտնում նոյնքան սիրուն դժբաղդ Կովկասի ժամանակակից ճշնոյ մթնոլորտում: Ի՞նչու են գաղթում, որովհետեւ թուրք հարեւանը դաւադրութեամբ մորթում է նրանց՝ բայց մեր երկրի այն ո՞ր անկիւնն է ազատ և ապահով այդ հարեւանից:

Առանց երկար ու բարակ մտածելու, մոլորուած, գաղթում են Բազուից. այն Բազուն, որ իր յառաջադիմութեամբ, վաճառականութեան և արդիւնագործութեան զարգացմամբ հայի ջանքերին է պարտական, այժմ զրգւելի է հայի համար, այժմ հայն այնտեղ իրան անկիւն չի գտնում: Մինչդեռ օտարազգիները հազարաւոր վերստերով հեռուից կկեն են յամառութեամբ շահագործում են մեր երկիրը, հայը թող նեղով արդէն իսկ իր ձեռքով

ծաղկեցրած փայլուն, ոսկր գործերը. փախչում է. Փախչում է իր գիւղը, իր աւանը, ուր նոյնպէս և աւելի վտանգուած է նրա գոյութիւնը:

Ո՞ր է թողնում հայը իր կոշտացած ձեռներով ստեղծած և մինչեւ օրս փայտայած գործերը: Ո՞վ այլևս պիտի աշխատի հայի նախահանքերում, գործարաններում, խանութներում և այլն: Ո՞ր է արժանի հայի հացը վայելելու, թէկուզ արեան գնով:

Ո՞չ, մի՛ փախչի. մի՛ գաղթի, ով հայ. այդ քու գոյութեան և իրաւունքիդ կախն է. Փախուստով դու իրաւունք և վստահութիւն ես տալիս թշնամուգ արեւմտու այն ամենին, ինչ քո արիւնքը քրտինքիդ և ջանքերիդ պտուղն է և ինչ պատմութեան օրէնքով քեզ է միայն պատկանում: Մի՛ փախչի, դու ինքդ ստեղծիր քեզ համար ապահովութիւն այդ կուր մէջ: Մի՛ մոռնար որ պատերազմից փախչող զինուորը արժանի է ամօթի և նախատինքի. նա արժանի չէ նոյն իսկ ապրելու...:

Սակայն գաղթելու չարիքը մի այն Բազունն չէ պատկանում: Հայը գաղթում է նաեւ ուրիշ քաղաքներից և գիւղերից. նա յուսահատուած է. նա չի ցանկանում վերականգնել կրակի և աւերի մատնուած իր տները, նա չի ցանկանում մշակել այն հողերը, որոնք դարձրել մշակել են իր պապերը, նա փնտռում է մի այլ տեղ, մի աւելի ապահով անկիւն: Բայց, խեղճ հայ, քո հայրենիքի ամէն անկիւնում էլ փուշ կայ: Մնացիք քո գիւղում, քանդիր այդ փուշը, մշակիր ներանքը քեզ յատուկ ժրջանութեամբ, այն ժամանակ դու ապահով ես ընդ միշտ:

Մի՛ րոպէ յետ նայիր քո անցեալիդ, տես ինչ մեծ շարիք են ստեղծել պապերդ գաղթելով տեղից տեղ, սարից սար. նրանք տուալ մէջք մէջքի էին տուած մի տեղ գումարուած և նրանց միջի փուշը խեղդուած էր... Դու

մի կրկնիր ճակատագրական այդ սխալը: Չլինի թէ դու խորհում ես հայրենիքիդ սահմաններից դուրս որոնել երազեայ բազուդ. Բայց այդ իրաւունքը դու չունիս: Ի՞նչ կո, ուստը քեզ պատում է օտարութեան շէմում: Օտար երկնքի տակ դու անարեւ կը մնաս, օտար հողի վրայ դու կը թող միս...:

Ո՞ր ես գաղթում, դու՛ երկրի հարազատդ, մի այնպիսի ժամանակ, երբ կատարում է այն ահեղ կռիւը, որով պիտի որոշւի դարձրել սրբագործուած քո իրաւունքներդ և գիրքդ:

Մի՛ գաղթիր, դրանով թշնամիդ յաղթանակում է:

«ԱՐՇԱՆՈՍ»

ՆԱՄԱԿ ԵՐԿՐԵՆ

Կարմիր գազանին արիւնտու բընազդները նորէն արթնացած են. մութ ամպ մը մեր ազգային հորիզոնը սաւառնած է որ հեռագետէ թանձրանալով խեղդամահ վիճակի հասուցած է մեզ: Արի՛ւն, աւե՛ր, կոտորած, թաւան ահա այն է անսայթաք պատգամը, հայութեան հոգածու! և բարեխնամ՝ փատիշահին, վերջնակա նապէս կազմուած է. այն եղեռնական ծրագրերը, ոսկից աներեւակայի ոճիրներ կը բղթին, այս դժոխային երկրին մէջ Դամոկլեան արեւնաշաղաղ սուրի պէս ամեն վայրկեան կախում է մեր գլխուն վրայ, ձեռքերն և ոտքերն և կապուած ինկած են: Ալլահին անարժան փատիշահին ոտքերուն առջեւ, ու շրջապատուած ենք բառարոտ վայրագ ու մոլեռանդ ամբողջ մը. որ սուրբ, կացիներ, ատրճանակներ պատրաստ ձեռքերն անհագ կատաղութեամբ վայրկեան առ վայրկեան մեզ մորթելու հրամանին կը սպասեն. յուզումը մեծ, երկիւղը սաստիկ, ապագան արիւնտու, ապացոյցները չեն որ պիտի պակսին մեր ըսածները հաստատու. կը կարգաք անշուշտ Պօլսոյ թիւրք թերթերու կատարի գայրոյթը գէպի հայերը. այս վերջի երկու շաբթուան մէջ, փաթիթցաւոր Սոփրաները կը գրգռեն ճամփներու մէջ կոյր ամբողջ Հայերու գէժ, Բարձրագոյն հրամանաւ, Կարնոյ, Սեբաստիոյ, Տրապիզոնի կուսակալները երգնկայ կը համախմբուին գազանածին Ձէքիին հետ խորհրդակցե-

լու ու հայ բնաջնջումի գործը կանոնաւոր կազմակերպելու, ամենի թափով մը սկսելու և ընդ միշտ հայ անունը աշխարհէն վերցունելու, ու մինչեւ որ քաղաքակիրթ և մարդասեր Եւրոպան լսէ մինչեւ որ հայ անուն կրող արտասահմանի կենցաղագէտ! և փափկանկատ ազգասէրները իմանան, արդէն ամեն բան վերջացած կը լայ, բուերը թառած կը լլան ծխապատ աւերակներու փոշիներուն վրայ:

Ձախջախուած ու դաշոյնուած դիւակները կուտակուած կը լլան հրապարակներուն վրայ, մէկ բան մը պիտուենեաք ընելիք. զըջալ, լալ և ողբալ: Ձեր անկարեկից գտնուելուն համար, վերջի զըջումը օգուտ չունի, եթէ մարդկային արժանապատուութեան զգացումը մեռած չէ մէջերիդ, եթէ կը միշտ թէ արիւնտու հայրենիքի մը զաւակներն էք. (որ այսօր Հայրենիք մը չունենանք համար, կը թափառիք): Եթէ կը միշտ թէ ձեր հրաժեշտի ժամանակ ինչ կտակներ ըրին Ձեզ Ձեզ եղբայրները և քոյրերը, եթէ կամք և եռանդ ունիք, արիւնտար վեր կը կենաք, մէկ կողմ թող ձեր սնտուի վէճերը, զրպարտութիւնները, Սօսիախթի, Նացիոնալիսթ ճողոմարանութիւնները, կուսակցական կոյր մոլեռանդութիւնը, Պահպանողական ծթած գաղափարները, համակերպութեան աւետարանը. և ամեն այն այլազան յոռի սընամէջ խճճանքները, որ այսպիսի տարիներ մեզ բան մը չհանցունելէ և չսորվեցունելէ վերջ անկերպարան քառու մը վերածեցին արտասահմանի հայութիւնը:

Կոչ մ'է որ մեր դժբաղդ Հայրենիքին անուսով կողոզներ արտասահմանի հայերուն, մասնաբաժնու թափաքիներուն, Յեղ. կազմակերպութիւններուն, որ ամեն հաճելի միջոցներ գործադրեն եղբայրաբար մօտեանալ մէկզմէկու համախմբուիլ. ու դարման մը խորհիլ մեր մահատանջ վիճակին. կոչ մ'է մուրացիկ այրիներու անպատուած կոյսերու, թափառող անտուն անտէր հայրերու և գաւակներու անունով, որոնք մեր սեւ երկնակամարի տակ կարմիր երկրին վրայ, վայրի գազաններու քմահաճոյքին ձգուած են. այս օրերս հարեւաւոր տեղեր մասնակի սպանութիւններ պատահած են: Պօլսը նորէն դժոխքի մը վերածուած է. գաւառացի հայեր երկիր կ'աքսորուին, շատերն ալ առանց հարցաքննութեան բանտերու խորը կը ճգնին, ահ ու գողի մէջ ենք եւ Ձեր պաշտպանութեան կապաւորները:

Յարգանք ՄԳԱՒՈՐ

Պ. Վ. ՄԻԷՏԻ ԱՏԵՆԱԲԱՆՈՒԹԻՒՆԸ

ՌՈՒՍ ՏՈՒՄԱՅԻ ՄԱՍԻՆ

(Շար. Ասխորդ քիւնն եւ վերջ)

Աւստի կրնո՞ւնք մամուլի ազատութիւնը միշտ օրէնքի ներքեւ... րովհետեւ ազատութիւն առանց օրէնքի կը նշանակէ միայն արտօնութիւն... արպէս երկրորդ օտքը Տումա նժոյգին : Երրորդ օտքը, հաւասարապէս անհրաժեշտ, ընկերութիւններու ազատութիւնն է : Կարող չէք առաջնորդել ընտրութիւն մը առանց քօմիթներու : Ե քանի կառավարութիւնը կրնայ, եթէ հաճի, պնդել թէ ոչ մէկ ընկերութիւն կամ քօմիթէ կարող է կազմուիլ առանց իր գիտակցութեան, անկարելի է ազատ ընտրութիւն մը ընել՝ եթէ երբէք ժողովուրդը ազատ չէ կազմելու ու է ընկերութիւն՝ օրինաւոր նպատակներու համար՝ առանց ուստիկանութեան հաճութեան : Այո, գոնէ անգլիական տեսակէտով տարրական տրամաբանութիւն մը կը թուի :

Չորրորդ օտքը տեսակ մը Հապէաս քօրքուս Աքդի մը հաստատումն է, որ պիտի ապահովէ կայսեր իւրաքանչիւր հպատակին, որ չը պիտի ձերբակալուի առանց հրամանագրի կամ բանտարկուի առանց դատավարութեան : Ապա թէ ոչ ի՞նչ վստահութիւնով մարդ կրնայ իր կարծիքը յայտնել ազատօրէն, անկեղծօրէն ու առանց երկիւղի ընտրութեանց մէջ, որ կարող պիտի դարձնեն ազգը հաւատարիմ եռանդով պատասխանել կայսերական մանիֆէստի կոչին : Այս չորս օտքերով—ազատութիւն ժողովրդային զուգորդմանը, ազատութիւն մամուլի, ազատութիւն ընկերութեան և ապահովութիւն ընդդէմ կամակատար ձերբակալումներու՝ բոլորն ալ պատկառուած ու կառավարուած օրէնքով, —Տուման պիտի ըլլայ նժոյգ մը՝ արժանի իր կայսերական հեծեալին :

ՍԷՍԻԼԻԱ Մ. ՊԼԷՅԲ

Դ Է Փ Ի

Հայկական Ռուման մը (Թարգմանութիւն Անգլիերէնէ)

ԳԼ. Թ.

ՍԻԼԷՍՏԱՆ ԻՐ ՎԱՐՁԱՅՐՈՒԹԻՒՆԸ Կ Ը Պ Ա Շ Ա Ն Ջ Է

Հայրս դժգոհ երեցաւ : «Ո՛ջ. Սիւլէյման, հօր մը երախտագիտութիւնը» կրկին ձեռքը գլխուս վրայ դրած աւ, չես կրնար երեւակայել թէ Դէֆին ինչ է ինչ համար : —Շատ լաւ կըմբռնեմ, ու Սիւլէյման ինչ ակնարկ մը բրաւ : —Տարիներ առաջ, շարունակեց հայրս, երբ Դէֆին ծնաւ, Արամաբան—Դաւիթի արքայական տան վերջին շատաւիղը, այնքան հարուստ էր աշխարհային ճոխութիւններով—ոսկով, արծաթով եւ թանկագին գոհարներով, որ ունեցածին հաշիւն ալ չէր գիտէր : Այն ժամանակ Բագրատունիի մը զաւկին վայել բնակատեղի մըն էր այս ապարանքը : Հի-

Առանց ատոնց դա պիտի ըլլայ կեղծիք մը, ծաղրանք մը, պատրանք մը և թակարդ մը :

Ուրիշ շատ կէտեր կան, որոնց վերայ կարող էի երկարօրէն խօսիլ, սակայն կը վստահմ թէ արդէն սպասեցի ձեր համբերութիւնը : Բայց բան մ'ալ պէտք է ըսեմ. Ինչպէս որ Տուման պարտաւոր է ունենալ չորս օտք, նոյնպէս ալ պարտաւոր է ունենալ և զլուխ մը. եթէ չկայ զլուխ, բերնով մը՝ որ հեծնողը կարողանայ կառավարել սանձով, ան կրնայ նստիլ հաճեալին վրայ, բայց երբէք պիտի չը հասնի իր սահմանակէտին. Ուրիշ խօսքով, եթէ միւս ազգութիւններու ներկայացուցչական հաստատութեանց փորձը բոլորովին մոլորեցուցիչ չէ, պէտք է ըլլայ Միւնիստր մը, վերահսկողն ամբողջ վստահութիւնը վայելող, որպէս միջնորդ և պատասխանատու իր պաշտօնակիցներուն Տումայի առաջ. Առայժմ այդ տեսակ Առաջին Միւնիստր մը չեք եւնար :

Ձեռք ձգելու համար իրական ներկայացուցիչ Տումա մը, գերագոյն բանն է վստահութիւն ներշնչել համոզել սկիպտիկ և վարանոտ ազգութիւն մը՝ որ իր վեհապետը առատաձեռն ու խելացի զգացումը յառաջ մղած պահուն չը պիտի գրոհ ստանայ և ընկճուի իր անուկով գործող իշխանութիւններու կողմէ. Եթէ, օրինակի համար, տուման հաւասարմօրէն ընդունուէր անոնցմէ օրոնք մինչև ցարդ բողոքած էրն առոր դէմ, եւ անոնք նեղութիւններու հանգչպէին ուստիկանութեան կողմէ կամ նոյն իսկ կը նետուէին բանտ, երբ կը պատասխանէին անոնք կայսեր կոչին՝ աշխատելով ընդհանուր հետաքրքրութիւն յառաջ բերել խնդրին Նրկատմամբ, կամ պատրաստել ընտրութեան նախնական քայլերը, ազդեցութիւնը պիտի ըլլայ արեւտալի. Անգլիոյ մէջ մենք կընդունինք ծուրմայի հաստատումը որպէս խաղաղութեան պայմանագրութիւն մը կայսեր

մա անոր ճակատագրին դարձը կը պատկերացնէ. — մօզայիկներուն, մարմարիոններուն, փղոպկրին, ոսկրին, Ասորեստանի պերճերանց թաւիչէն վիշակներուն փոխանակած են քայքայում, խոնաւութիւն, ծանգ, փոշի եւ աղտոնութիւն : Կը տեսնես Սիւլէյման, ըսաւ հայրս, իրապէս արքայական շարժումով մը ձեռքը բերեցնելով : Այն ա տեսն, թէ որ մէկը այսպիսի ծառայութիւն մը մատուցանէր, ինչպէս որ դուն ըրիր սիրտուն. Դէֆին, — իր վաղակորոյս մօր միակ մնացորդը, — փրկելով, յայնժամ Արամաբանը պիտի ըսէր, ինչո՞րէ ինչմէ, եւ պիտի տամ քեզ : Նոյն իսկ թագաւորութեանս կէտը : Ափսոս, ափսոս, այդպիսի առաջարկ մը ծաղրանք մը պիտի ըլլայ հիմա. Թշուառ մէկ մըն եմ, ինչպէս որ կը տեսնես : Դարձեալ խորիս ճօճումը գարձեալ վսեմ շարժում : —Հանգիստ եղի՛ր Արամաբան, ըսաւ Սիւլէյման, քու երախտագիտութիւնդ մեծ է, քու վարձատրելութեանդ մեծ : Հանգիստ եղի՛ր. ես քեզմէ ամենահնարաւոր վարձատրութիւն մը պիտի ուզեմ. կրնամ խօսիլ : — Խօսէ՛, Սիւլէյման, թէ որ կարողութեանդ վեր չէ, խնցրանք արդէն շնորհուած է :

և անոնց միջեւ, որոնք չթախտաբար աւելի կամ պակաս շափով պատերազմի մէջ եղած են իր դէմ. Եթէ այս մարդիկ, կամ անոնցմէ ու է մէկը, ձերբակալուին, տպաւորութիւնը պիտի ըլլար միևնոյնը՝ ինչպէս իրական պատերազմի մը մէջ, երբ զօրավարը խաղաղութեան պայման զնելով՝ թշնամիին անձնատուութիւնն վերջ գանձք սպաննէր... (Ընդհանուր ներման համար դիմում մը ընելէ վերջ՝ այսպէս կաւարտէ իր ճառը պ. Սրէտ.—)

Հիմա որ տուման հոչակուած է թուլութիւն պիտի նշանակէ բանտարկուած պահել անձնատուութիւններ, որոնց գլխաւոր և թերեւս միակ յանցանքը եղած էր պահանջել երէկ այն ինչ որ կայսրը այսօր կընդունի անհրաժեշտ շնորհելու լաւագոյն շահերու համար :

Թարգմ. Անգլ. Օրաթերթ «ՏԵՅԼԻ» ԳՐՕՆԻՔԸՆԷՆ

ՆԱՄԱԿ ԳՕՆՄԴԱՆՁԱԷՆ

Երբքը թշուառին սփոփանքն է, յուսահատեալին քաջայերութիւնը. նա կազնուացնէ մարդ, կը յուզէ, կը սփոփէ, կը մխիթարէ, զինուորական նուաղարանի թոթուած հնչումներու տակ քաջարի զինուորը ելեկտրականացած կը յառաջանայ դէպի անառիկ բերդը եւ կը գրաւէ զայն, սրբակրօն քահանան անուշ մեղեդիներ երգած պահուն կոչ կընէ սուրբ հոգոյն զալ սրբագործել Գրիստոսի արմնոյ եւ արեան վերածել, հացն ու գինին, Մանուկն իւր օրորոցին մէջ չի քնանար մինչև որ մօր անուշիկ օրօն իւր դեռափթիթ ազանջներուն չի հասնի. վերջապէս այս պանդուխտը ախ մը կը քաշէ իւր սրտի խորքէն, ախ մը որ ակնթարթի մը մէջ աչքերուն առջեւ կը պատկերացնէ Հայրենիքի օճախն, կարօտակէզ սիրելիներ... որոնցմէ

Ասկէ խրախուսուելով՝ Սիւլէյման սկսաւ : Բայց և այնպէս, յուզուածքը առաջին անգամ ձայնը նոյն իսկ անլսելի դարձուց, բայց, շուտով յաջողեցաւ ընկճել զայն, ու իր հօր, հնչական ձայնը հոգւոյս մէջ թրթռալով պարսպ սրահին խորշերուն մէջ արձագանքել սկսաւ : Լաւագոյն քան ոսկրն, արծաթը կամ թանկագին գոհարները, կըսէր ան լաւագոյն քան տունները, հողերը և լեռներու վրայ արածող հազարաւոր ոչխարները, լաւագոյն քան գոհարազարդ գաւազաններն ու սկանակուտ պսակները, քու զոտարդ—Դէֆինդ է Սիւլէյմանին համար, ո՞վ Արամաբան, նոյն իսկ կեանքէ ալ աւելի թանկագին է քու ծաղիկդ : Ո՛հ, Արամաբան, եթէ ժամանակը գայ՝ միայն թէ կարողանամ զայն իրրել հարս պահանջել—այդ թող ըլլայ իմ վարձատրութիւնս—իմ հատուցումս :

Սիւլէյմանի գեղատիպ կերպարանքը պայծառացաւ : Դէմքը կը շողշողար, ինչպէս Մովսէսինը՝ յոննէն իջած պահուն : Ես, հօրս մօտ կանցնած՝ կը զողոզայի : Ո՞վ էի՛ ես, ոչորմելի, անմիտ Դէֆին որ այդպիսի վեհ սրտի մը մէջ սասնկ սէր ներշնչէի : Հօրս խօսելէն առաջ քանի մը րօպէ անցաւ : Սիւլէյման ուղիղ կանգ-

այլեւս յաւիտեան բաժնուած է, իր յոգնատանջ մարմինը խղճուկ անկողնոյն վրայ նետած պահուն արձարանի մէջ, իւր բազդակից ընկերոջ ձայնը կը լսէ որ՝ կոունկը կերպէ :

Այսպէս ախարհի սկիզբէն ի վեր, ամեն ժամանակ, ամեն տեղ եւ ամեն պարագայի մէջ, երգը մարդ արարածին էութեան անբաժանելի մի մասը կազմած է եւ պիտի կազմէ միշտ, ցորչափ որ ունենայ ցաւ եւ վիշտ, ուրախութիւն եւ փափազ :

Ամեն ժողովուրդ հերգէ. կան ժողովուրդներ սակայն, որ ամենէ աւելի պէտքը կըզգան նրա եւ ատոնց կարգին կարելի է դասել նաեւ հայ ժողովուրդը, մանաւանդ նրա այժմեան ճգնաժամային դրութեան մէջ : Ասոյ զգացման տեղի տալով է որ քաղաքիս երիտասարդութեան պարտաճանաչներու մեծագոյն մասը (փոքրամասնութիւնը ժամանակաւոր յանձնախումբի անփորձութեան պատճառաւ տեղեկացած չը լինելով) ներկայ գտնուեցաւ անցեալ կիրակէ սեպտ. 25ին Արաքս սրահի մէջ տեղի ունեցած ժողովին, որս նպատակն էր կազմակերպել երգեցիկ եւ թատերական խումբ մը : Տաք վիճարանութեան մը վերջ միաձայն հաւանութեամբ ընդունուեցաւ խումբին կազմուելը, ժողովրդեան ամեն խաւերու մէջ առնչութիւն ունենալու սահմանեալ սոյն կազմակերպութիւնը աւելի հաստատուն հիմքու վրայ դրնելու նպատակաւ, ընտրուեցաւ յանձնախումբ մը, որ այս առթիւ պէ քեզ եղած ձեւակերպութիւնները կատարելէ զաւ արտի պատրաստէ նաեւ պատշաճ կանոնագրութիւն մը, որը ընդհանուր ժողովին քննութեան պիտի ենթարկուի յառաջիկայ կիրակէ հոկտ. 4ին ուր նաեւ պիտի ընտրուին վարչական զիւանի անդամները :

Յանձնախումբի անդամները, որոնք ամենքն ալ, առանց բացառութեան՝ աշխատասէր, լուրջ եւ խոհուն երիտասարդներ են, վստահ ենք թէ իրենց վրայ ինչպէս պարտականութիւնը լիովին պիտի կատարեն

նա՞ծ էր անոր առջեւ, նոյն սքանչելի պայծառութիւնը դէմքին վրայ :

Վերջապէս զգալի անխողութեամբ մը խօսեցաւ հայրս : Իր խօսքերէն էին կախուած երկու տարիաւոր սըրտերու ճակատագիրը :

—Շատ ճամբիտ խօսեցար, Սիւլէյման : Արծաթէն, ոսկիէն, թանկ գոհարներէն լաւագոյն, —նոյն իսկ կեանքէ ալ սուղ է Դէֆին իր հօրը սրտին : Պէտք եղածէն աւելին խնդրեցիր, Սիւլէյման : Անձանթ մըն ես ինչ և... մահճետական մը :

—Սիւլէյման մահճետական մը չէ, հայր իմ, ընդմիջեցի :

—Մահճետական մը չես, Սիւլէյման :

—Դէֆին ճիշդ է, Ես թիւրք մըն եմ, ինչպէս և հայրս, սակայն մայրս յոյն մը ըլլալով՝ հօրս բացարձակ հաւանութեամբ էն կրթից մեզ իր հաւատքով, Մատաթ, Արամաբան, քերթստոնեայ մէ :

—Գրիստոսեան՝ մը... Սիւլէյմանին դէմքին պայծառութեան ցոլքը հօրս վրայ իջաւ, ու այդ կերպարանքին վրայ հանգչող յաւիտենապէս միգապատ ու տխրամած արտասայատուութիւնը գերագոյն շողով մը փայլեցաւ : —Ո՛ւ կը մեռնիս՝ դուն տիրոջը համար, հարցուց ան :

—Ի՞նչ որ նահատակի պսակը ըն-

Թեան և ընդհանուր նահանգապետի առաջնորդութեամբ մի հանդիսաւոր թափօր կատարեցին քաղաքի մէջ։ Եկեղեցում և մզկիթում հանդիսաւոր ճառեր խօսուեցան՝ երկու ազգերի մէջ եղած տարաձայնութիւնները վերջացնելու անհրաժեշտութիւնը ցոյց տալով։

Վրաց էկզարխը ստացել է Ձիւգօստովկոնկուտա (Բագուի նահանգ) գաղթաւայրից, սեպտ. 22ին հետեւեալ հեռագիրը.

«Թուրք աւազակներ Ձիւգօստովկոնկուտայի շրջակայ բոլոր գիւղերը թալանում են։ Մօտ օրերս նրանք բռնեցին Լուկա Ձուբովին և կատարելապէս կողոպտեցին։ Կողոպտելիս վիրաւորում են և դազանաբար տանջում կանանց և տղամարդկանց։ Ձուբով աննկարագրելի սարսափներ է պատմում։ Եկեղեցին, պոստ-հեռագրատան շէնքը, պետական և մասնաւոր շէնքերը և բնակիչներին բոլորի կեանքը վտանգի մէջ է, ոչ մի պահպանութիւն չըկայ, ոստիկանութիւնը անգործ է մնում, որովհետեւ վախեւորում է։ Աւազակները օրը-ցօրեկով թալանում են։ Այս տեղ ուղարկուած կողակները միայն պրիստաւի եւ Կուր գետի ափին գտնուող ձկնորսարանն են պաշտպանում։ Ձիւգօստովկոնկուտա մնում է անպաշտպան եւ այնպէս էլ անպաշտպան են մնում միւս ուսուական ձկնորսային գաղութները։ Ժողովրդեան կողմից աղաչում եմ ձեր սրբութեան միջնորդել միջոցներ ձեռք առնել և աղատել եկեղեցին թալանելուց և պղծելուց։ Եկեղեցին և միւս ծխական շէնքերը գտնուում են մի վերստ հեռու։ Քարուքանդ լինելուց յետոյ, անհնար կը լինի այլևս վերականգնել տաճարը, որովհետեւ վերջին երեք օրերս բոլոր ծխականները թալանուել են»։ Գործակալ քահանայ Արկադի Գորոզէցիյի և հասարակութեան կողմից՝ Եակով Կրէմ, Տիմօֆէյ Իւրչէնկօ, Վասիլիյ Բելոկուրով եւ Վասիլիյ Կլօզէկ։

«ԱՐՇԱՆՈՅՍ»

ԿՈՎԿԱՍՏԱՆ ՄԱՄՈՒԼԸ

—()—

Կովկասեան մամուլի երկու ճիւղերը, թրքական և վրացական, բացարձակօրէն ամէն մեղադրանք հայերի գլխին ենթափում և կովկասեան ներկայ գաղտնական կացութեան դրդիչը հայերիս ներկայացնում։ Ձարմանալին այն է որ վրաց մամուլի բոլոր ուղղութեան պատկանող թերթերը պահպանողական, ազատական և արմատական, նոյն ուղղութիւնն են բռնել դէպի յոշոտ

ւող հայութիւնը։

Կովկասի հայ թերթերը ի հարկէ ձեռնաթափ չեն մնացել և հընար եղածին չափով պաշտպանում են հային դրացի ցեղերի մամուլի յարձակումների դէմ, բայց ցաւը նրանումն է որ այդ դառն իրականութիւնը գոյութիւն ունի։ Հային նախանձող վրացին և թուրքը այսպիսի նուրբ պարագաներում իսկ աշկարայ կերպով մէջ տեղ են դնում իրենց զգացումները դէպի հայութիւնը... Եղբւր ընկած միջոցին գա նախաւորները կը շատնան, ստում է առածը։ Այս օր հայութիւնը ներկայացում է մի ընկած եղ իր բոլոր հատուածներով միասին եւ գանակաւորները շատացել են են։ Դանակ է խաղցնում հայի գլխին թուրքը, Պարսիկը, Ռուս կողակը, Վրացին, թուրք և ռուս պաշտօնեաները մի խօսքով ամէն օր ով գազանութեան բնազդներ ունի և կարող է իրականացնել մորթիւնը եւ յոշոտիւնը հանդէպ հայերս ինչ ենք անում. գաղթում ենք, փախչում ենք... Քաղթում էր տաճկահայք այսօր գաղթել սկսել է և Կովկասահայք Բագուից, Նախլեւանից. Եւրջուց, և այլ տեղերից փախչում են... դէպի Ռուսիոյ խորքերը թողնում են ամէն բան և փախչում... դժբախտ, թող ցեղերի նմոյշը պատկերացնելով աշխարհի առջեւ... Մինչեւ երբ այսպէս պէտք է լինի... արդեօք մինչեւ բոլորովին չ'ըջվելը. կոտորվելով, թալանվելով, գաղթելով, թէ մի օր էլ մենք պէտք է կարողանանք ակնընդականի դաւանանքը իւրացնել և մեռնել մեռցնելով, անհետանալ անհետացնելով... Ընջվել ընջվելով... չէ որ հաշիւը մէկ է. մեզ ընջվելն ուղիւմ որքան խաղաղ, հաշտ, խոհեմ հնազանդ ենք ներկայանում, այնքան մեր վզին սեղմում են իրենց ոտքերը, ուրեմն էլ ինչի պէտք է անտելի, անօգուտ և անփառունակ կերպով ընջվել։

Դարերի ստրկութիւնը մեզ նա պոստակի էր վերածել... բայց միթէ մօտ քսան տարւոյն արիւնոտ մաքառումը մեզ չը կարողացա՞ւ փոխել... վայ մեզ, վայ, և միշտ վայ պէտք է լինի քանի գիտենք մեռնել բայց ոչ մեռցնել... քանի այդպէս ենք. մեր հարստութիւնն էլ, մեր կրնն էլ, մեր ծրերն էլ, մեր կեանքն էլ մերը չեն... այլ դազան տարրերինը վայրենի թէ քաղաքակիրթ։

Ա Ձ Դ

Պուրբէշի մանկապարտէզին համար վկայեալ մանկապարտէզպանուհի մը կը փնտռուի։ Դիմել հայ եկեղեցոյ թաղ. Ոոր հրդոյ Ատենապետ Տիար Յ. Իվանչոզկու։

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Պուլկարիա հրաւիրուած է Լահէի երկրորդ համաժողովին։

—Կառավարական պաշտօնական «նովվէկ» թերթը կը ծանուցանէ որ ազգային պանքային գլխաւոր պաշտօնեաները իրենց պաշտօններէն արձակուած են ազգային ժողովի կողմէն ընտրուած յանձնախմբի մը տուած տեղեկագրին համաձայն։

—Պուլկար թերթերը կը հաղորդեն որ էքզաղխը պուլկար կառավարութեան խորհուրդ տըւած է թուրքիոյ հետ բարեկամական յարաբերութիւններ պահպանել միշտ և այդպէսով աշխատիլ առաջ տանիլ թուրքիոյ մէջ գտնուող պուլկար տարրին յառաջդիմութեան և բարեւաւութեան գործը։

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Թ Ո Ւ Ր Ք Ի Ա

Սուլթանը վերջին իրատեղով մը հրամայած է կարավարութեան վերջնապէս մերժել Մտկեղոնիոյ երեւմտից քօնթօրը ընդունիլ։

—Մտկեղոնիոյ զանազան տեղերը յոյն հրօսախմբերը կը շարունակեն իրենց գազանութիւնները հանդէպ պուլկար բնակչութեան։

—Պոլսոյ մէջ հայերու ձերբակալութիւնները կը շարունակուին. Բանտերը լեցուն են հարկով։

—Պոլսոյ հայ թերթերը տպագրած են հայոց ազգային ժողովին և եպիսկոպոսներուն Սուլթանին ուղղած շնորհակալական ուղերձները. եպիսկոպոսներու ուղերձին մէջ ըսուած է որ շատ գոհ են որ Սուլթանը իրատեղով մը վերջին դաւադրութիւնները կը վերադրէ մասնաւոր նոր գազափարներով տոգորված հայերու որոնց նմանները ամեն ցեղերու մէջ կան, բայց ոչ ամբողջ հաւատարիմ հայ ժողովրդին։

Թ Ո Ւ Ս Ի Ա

Անցեալ օր թանի մէջ կարգացին հետեւեալ բնորոշ լուրը. — Թիֆլիզի թերթերուն մէջ խաղախներ ստորագրութեամբ յայտարարութիւն մը տպագրուած է որով խաղախները կը յայտարարեն հայերուն թէ՛ եթէ հայերու կողմէ ու է սպանութեան փորձը լլայ իրենց հանդէպ, անոնք անխնայ պիտի կոտորեն հայերը եւ թալանի ենթարկեն. մինչեւ անգամ էջմիածինն։

—Նորերս Մոսկուայի համալսարանի տեսուչ ընտրուած ազատական իշխան թրոպեցկոյ Բեթրեսպուրկի մէջ յանկարծամահ

եղեր է։ Իշխանը Ռուսիոյ մէջ սահմանադրութիւն պահանջողներու եռանդուն և ազդեցիկ ներկայացուցիչներէն մին էր և Մոսկուայի զեմստվոյի կողմէն ցարին իրրեւ պատգամաւոր ներկայացած ատեն շատ անվասօրէն պաշտպաններէր ժողովուրդին դատը և դատափետեր. Ռուսական ռէժիմը։

—Համալսարանները դարձեալ փակուած են կրթական նախարարին հրամանաւ որովհետեւ ուսանողական ժողովներու սկսերեն մասնակցիլ եւ ոչ ուսանողներ յեղափոխական խաւերու պատկանող։

ՅՐԱՆՍՍ

Այս րոպէիս ամբողջ Ֆրանսականին շպէս և դերմանական ուսանողական մամուլը զբաղած են Դելկասէի արտաքին գործոց նախարարութիւնէն հրաժարելու խնդրով։ Դելկասէի կողմնակիցները կուզեն հաստատել որ այդ նախարարը զոհ գացած է Գերմանիայի խիստ պահանջներուն, որ կուզէ միշտ Ֆրանսան ճնշել, ու բռնադատել կամ Կերմանիոյ քաղաքականութեան հետեւի և կամ թէ ուղղակի պատերազմի։ Դելկասէի պաշտպան թերթերը կը յարեն որ Անգլիա Ֆրանսայի խոստացած էր ամեն կերպ օգնել, եթէ Գերմանիա պատերազմ հրատարակէր Մարքի խնդրի համար...։

ՍՐԱՆ ԳՈՒԿԱՐԻԱ

Յառաջիկայ շաբթուո նորեկ իտալական «Վարիէթէ» դերասանական խումբը մեծա պատրաստութեամբ պիտի ներկայացնէ Պուլկարիոյ մէջ առաջին անգամ ըլլաւով։

ԼԱ ԿՐԱՆ ՎԻԱ

անուն խիստ ծագրաշարժ օրերէքը, որ ներպական բոլոր սրահներուն մէջ հարիւրաւոր անգամներ ներկայացուած է, կը հրաւերուի թատերադր ազգայինք սոյն հաճոյալի Երեկոյթիս քաղաքիւրով մեր այս դժուարին ձեռնարկը։ ՄՈՒՏՔ ԱԶԱՏ է

Իսկ օթեակները. — Թիւ 1 Քր. Թիւ 2, 3, 4, 5, Քն. 3. Թիւ 6, 7, 2. Տնօրէն. սրահ Պուլկարիոյ 4 հոկ. 905 Աստ

Ա Ձ Դ

Սիլիստրէի Ազգային երկսեւ վարժարանիս համար հարկաւոր է երաժիշտ ուսուցիչ մը, որ պարտաւոր ըլլայ դասախօսել վարժարանին մէջ 10-2 ժամ, գլխաւորաբար ազգային եւ եկեղեցական երգեր, հսկել, եւ եկեղեցւոյ մէջ ալ դպրութիւն ընել. Ամսաթօշակը գոհացուցիչ պիտի ըլլայ։ Բանակցութեան համար դիմել ուղղակի ժողովոյս ատենապետին. Ի դիմաց Հոգաբարձութեան Ատենապետ Գ. Աղամեան Գ. Կ. Տիրացուեան 46 Սեպ. 1905 (Կնիք) Սիլիստրա